

ծածնայ ժամն երեք խորան ունին Փռանկք,
 որ ամէն շաբաթ եւ կիրակի դան պատարագ 25
 առնեն. եւ թէ մերոնք պատարագեն, նորա
 սուրբ Քառասունք երթան: Բայց Մարունիք
 մեծ սէր եւ հնազանդութիւն կ'առնեն մեր
 առաջնորդին. երբ ժամուն կ'ելնեն, դան զաջն
 համբուրեն եւ արձակունն խնդրեն. եւ թէ 30
 ժամէն ելած չեն, անշափ պիտոր կենան, որ
 ժամն արձակի, խաչ առնուն, ապա երթան.
 իսկ Հոռոմք զայս ոչ առնեն: Կան եւ Ասորիք
 յորով եւ անուանիք. ունին քարէ եկեղեցիք
 այլ տեղ»: 35

Եւ կայր մերձ եպիսկոպոսարանին քարէ
 խցեր Հայոց: Եւ կաթողիկոսարանն ունէր
 ներքնատուն, միջնատուն եւ վերնատուն վի-
 մաչէն: Եւ պատրիարզն սուրբ Երուսաղէմայ
 եւ կաթողիկոս Սըսայ էր Յովանէս կաթո- 40
 ղիկոս, որ միշտ ի Հալապ նստէր: Կայր եւ
 վարդապետ մի Յօհանէս Ուռհայեցի եւ ար-
 քեպիսկոպոս մի տէր Խաչատուր. լաւ տէր
 վարպետ մի. որք էին հիւրասէրք, հեղ եւ
 քաղցրարան: Կայր այլ եպիսկոպոս երեք. 45
 հինգ հարեղայ եւ հինգ էրէց. եւ երեքհարիւր
 տուն հայի կայր: Իմաստունք, վարթամք,
 գեղեցկատեսիլ, նման Զուղայեցոց եւ Ամթե-
 ցոց՝ անուանիք եւ մեծ վաճառականք, որ
 մարդ ամաչէր երեսփին հայիլ: Կայր խոճայ 59
 Ղանտիլն եւ այլ համբայք նորա քառսուն հա-